

**ԲԺՇԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Կարապետ Հովհաննեսի Առաքելյան

ՀՊՏՀ Մարքեթինգի ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու

Էլեն Վահանի Խեկոյան

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրանտ

Բժշկական զբոսաշրջության հայտնվելը զբոսաշրջության տեսակների բազմազանության մեջ բավականին երկար և տևական փոփոխությունների ու զարգացումների արդյունք է: Հայտնի է, որ ամենաառաջին ճամփորդությունները իրականացվում էին բացառապես առողջության և մարդկանց կյանքի որակի բարելավման նպատակով:

Հին և միջնադարյան ժամանակաշրջանում առողջացման համար ճամփորդություններ կատարվում էին միայն դիտարկումների ու առողջարանային գործոնների վերաբերյալ գիտելիքների հիմքով, իսկ բուժական ազդեցության հիմնական ձևերն էին շոգեբաղնիքները, լոգանքները և նմանատիպ պարզագույն պրոցեդուրաները:

Արդեն 16-րդ դարում սկսեց գիտական հետաքրքրություն առաջանալ առողջարանների նկատմամբ և ձևավորվեցին հիմքերը, իսկ կապիտալիզմի զարգացմանը զուգահեռ, սկսած 19-րդ դարից, առողջարանների գործունեության մեջ հայտնվեց առևտրային բաղադրիչը՝ պայմանավորելով վերականգնողական միջոցառումների ու այնպիսի կազմակերպությունների հայտնվելը, ինչպիսիք են առողջարանները, պանսիոնատները և այլն, որտեղ այցելուների բուժման գործընթացն ուղեկցվում է հաճելի ժամանակ անցկացնելով:

20-րդ դարում բուժական ծառայություններ ստանալը մշտական բնակավայրերից հեռու վայրերում կրկին փոփոխության է ենթարկվում և կախվածության մեջ դրվում տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից և մշակութային առանձնահատկություններից:

20-րդ դարի վերջի և 21-րդ դարի սկզբի ժամանակահատվածը բնութագրվում է գիտատեխնիկական առաջընթացի բարձր տեմպերով և հասարակության կյանքում նոր ու ինովացիոն տեխնոլոգիաների հայտնվելով, ինչը նպաստում է արդեն 20-րդ դարի 90-ական թթ. սկզբներին կլինիկական բուժական/առողջապահական զբոսաշրջության ինքնուրույն ուղղության առանձնացմանը, ինչի դինամիկ զարգացման ականատեսն ենք հիմա մենք¹:

¹ Ветитнев А.М., Кусков А.С. Лечебный туризм: учебное пособие / А.М. Ветитнев, А.С. Кусков, М.: ФОРУМ, 2014, с. 592 : ил. – (Высшее образование).

Բժշկական զբոսաշրջության զարգացումն ամեննին պատահական չի, քանի որ աշխարհի բնակչության թվի աճին զուգահեռ բավականին մեծ տեմպերով զարգանում է նաև զանազան հիվանդություններից մահացությունների թիվը և իրենց կյանքի համար պայքարում ավելի հաճախակի են բուժման նպատակով դեպի այլ երկրներ տեղաշարժվելու դեպքերը:

Այս տեսանկյունից, պետք է նշել, որ ԱՀԿ տվյալներով 2015թ. աշխարհում գրանցվել է 56.4 մլն. մահվան դեպք, որոնց ավելի քան կեսը (54%) տարբեր բնույթի 10 հիմնական հիվանդությունների պատճառով¹: Ընդ որում, այդ հիվանդություններն ըստ տարիների փոփոխվում են՝ չնայած, առաջին եռյակը 1990-ական թթ-երից անփոփոխ է, իսկ հնգյակում միշտ առկա են 10-յակում ներառված հիվանդությունները (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Մահացությունների պատճառ հանդիսացող 10 հիմնական հիվանդությունները 2000 և 2015թթ. (մլն մարդ)

2000թ.		2015թ.		
1	սրտի իշեմիկ հիվանդություններ	6.88	սրտի իշեմիկ հիվանդություններ	8.76
2	ինսուլտ	5.41	ինսուլտ	6.24
3	պնևմոնիա	3.41	պնևմոնիա	3.19
4	թոքային խրոնիկ հիվանդություններ	2.95	թոքային խրոնիկ հիվանդություններ	3.17
5	ստամոքսաղիքային ինֆեկցիաներ	2.18	շնչառական օրգանների քաղցկեղ	1.69
6	տուբերկուլյոզ	1.67	շաքարային դիաբետ	1.59
7	ՄԻԱՎ/ՁԻԱՀ	1.46	Ալցոգեյմերի հիվանդություն և դեմենցիայի այլ դրսևորումներ	1.54
8	վաղաժամ ծննդաբերության բարդություններ	1.34	ստամոքսաղիքային ինֆեկցիաներ	1.39
9	շնչառական օրգանների քաղցկեղ	1.26	տուբերկուլյոզ	1.37
10	ծննդային տրավմաներ	1.12	ՃՏՊ տրավմաներ	1.34

Աղյուսակի տվյալներից երևում է, որ մահվան ելքով ավարտված


¹ <https://www.alliedmarketresearch.com/medical-tourism-marketSciences-Health-Care/gx-lshc-2016-health-care-outlook.pdf>.

հիվանդությունների շրջանակը փոփոխվել է, սակայն սրտի իշեմիկ հիվանդությունները, ինսուլտը, պնևմոնիան և խրոնիկ թոքային հիվանդությունները շարունակում են ամենաշատը մարդկանց կյանքերը խլել:

Բժշկական ծառայությունը սպառելու համար ճամփորդությունները ժամանակակից երևույթ են, որոնք, սակայն պատմության խորքերը գնացող արմատներ ունեն: Տվյալ պահին չունենալով սեփական երկրում առաջացած բժշկական խնդիրները լուծելու հնարավորություններ՝ հիվանդությունն ունեցողը ընտրում է երկիրը, տարածաշրջանը, բժշկին և հիվանդանոցը, որտեղ կարող են բուժել և որտեղ ցանկանում է բուժում ստանալ:

Բժշկական զբոսաշրջության համաշխարհային շուկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2016թ. սպառված ծառայությունների ծավալը կազմել է 46 մլրդ ԱՄՆ դոլար և մասնագետների գնահատմամբ 2017-2023թթ. ժամանակահատվածում միջին տարեկան աճի տեմպը կհասնի 15%-ի՝ հասնելով 165 մլրդ ԱՄՆ դոլարի շեմը 2023թ.¹:

Մեկ այլ՝ Adroit Market research-ի գնահատումներով 2017թ. բժշկական զբոսաշրջության ծավալները կազմել են 17.14 մլրդ ԱՄՆ դոլար, ու պարզագույն կանխատեսմամբ 2018թ. ցուցանիշը մոտ կլինի 20 մլրդ-ին:



Գծապատկեր 1

Բժշկական զբոսաշրջության գլոբալ զարգացման հեռանկարները 2015-2025թթ.²

(մլրդ ԱՄՆ դոլար)

¹ **Балашов А.И.** Оценка перспектив развития туристической дестинации Санкт-Петербурга [Текст] / А.И. Балашов // Управленческое консультирование. – Северо-Западный институт управления РАНХиГС при Президенте РФ, СПб., 2016, № 5 (89), сс. 75-80.

² Ըստ՝ <https://www.adroitmarketresearch.com/industry-reports/medical-tourism-market> -ի տվյալների:

Նկատենք, որ այս ցուցանիշների ու կանխատեսումների տարբերությունները միմյանցից տարբերվում են զուտ այն պատճառով, թե ինչն են ներառել իրենց հաշվարկներում՝ որոշ դեպքերում հաշվարկներում ընդգրկելով միայն հենց բուժման ծախսերը և հաշվի չառնելով ուղեկցող ծախսերը: Բժշկական զբոսաշրջության նկատմամբ հասարակության հետաքրքրության և վստահության բարձրացումը պայմանավորված է հետևյալ խմբերի գործոններով.

- փոփոխություններ ժողովրդագրական կառուցվածքում. բնակչության ծերացումն ու կյանքի միջին տևողության աճը, ավագ տարիքի մարդկանց ակտիվության ու շարժունության մեծացումը,
- աշխատունակ բնակչության մոտ սթրեսների մակարդակի նվազեցման անհրաժեշտությունը,
- բժշկական հայեցակարգի փոփոխություն հոգուտ հիվանդությունների կանխման և այլընտրանքային բուժման մեթոդների,
- առողջապահության և առողջության հոգեբանության փոխկապվածության ուժեղացումը,
- զանգվածային զբոսաշրջությունից անցումը դեպի ճամփորդությունների անհատականացված ձևեր¹:


Բավականին մեծ է նաև գլոբալացման նշանակությունը. բժշկական ճամփորդությունների թվի աճը պայմանավորված է մարդկանց շարժունակության մեծացմամբ, տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների ու համակարգերի առաջատար դերով, միջազգային առևտրի զարգացմամբ, ինչպես նաև վերազգային մակարդակում մարդկանց առողջության ընդհանուր վիճակի ու միտումների նկատմամբ համաշխարհային հանրության ընդհանուր անհանգստությամբ: Բացի այդ, զբոսաշրջության ոլորտի մասնագետները համակարծիք են, որ ճամփորդությունների բժշկական ուղղությունը ներկայումս ամենահիմնականներից է որմնախորշային զբոսաշրջության ողջ բազմազանության մեջ²: Եվ իրոք, նկատվում է մասնավոր ու պետական կազմակերպությունների թվի աճ, որոնք մասնագիտանում են քաղաքացիների առողջության պահպանման, ապահովագրության և «հիվանդ»-զբոսաշրջիկներին դեպի այս կամ այն երկրի կամ նույն երկրի տարբեր տարածաշրջաններ ուղղորդող խորհրդատվական ծառայությունների գծով:

Այստեղ կարևոր ենք համարում նշել, որ բժշկական զբոսաշրջության բավականին արագ զարգացման հիմքում, սակայն, ամեննին էլ համեմատաբար լուրջ

¹ **Hall C. Michael** Medical Tourism: The Ethics, Regulation, and Marketing of Health Mobility / Hall C. Michael, Oxon: Routledge, 2013, p. 224.

² *Мейнстрим* (от англ. Mainstream) – главное, основное направление в какой-л. области научной, художественной, политической, публицистической и иной деятельности.

հիվանդությունները չեն և ինչպես վկայում են բազմաթիվ հետազոտություններ և մեր դիտարկումները, առվել մեծ ցուցանիշ են ապահովում պլաստիկ և ատամնաբուժական նպատակներով ճամփորդությունները: Եթե սրան էլ ավելացնենք ճարպակալությունը, որը շատ հաճախ էլի կոսմետիկ բնույթ է կրում, ապա կստացվի, որ բժշկական զբոսաշրջության մոտ կեսը բաժին է ընկնում այնպիսի հիվանդությունների, որոնք առանձին դեպքերում կարելի է նաև չբուժել (գծապատկեր 2):



Գծապատկեր 2

Բժշկական զբոսաշրջության բաշխվածությունն ըստ հիմնական բուժական նպատակի 2017թ.¹

Բուժական նպատակով ճամփորդող զբոսաշրջիկի ուղևորություն կատարելու որոշման հիմքում ընկած է երկու միմյանց հակառակ դիրքերում գտնվող խթաններից մեկը. կամ կենսական անհրաժեշտությունը (օրինակ, երբ սրտի անհետաձգելի վիրահատության խնդիր կա), կամ սեփական ցանկությունը /օրինակ, երբ քթի կամ մարմնի այլ մասի պլաստիկ վիրահատություն է պետք կատարել/:

Առաջին դեպքում ուղևորության պատճառը առողջապահության հայրենական համակարգի անարդյունավետ աշխատանքն է (օրինակ, բուժվելու հերթին սպասելը, հնացած սարքավորումները, գործողությունների օրինականությունը և այլն), իսկ երկրորդ դեպքում արտացոլվում է մարդու կամարտահայտությունը, ով ցանկանում է ստանալ առավել որակյալ և/կամ յուրահատուկ ծառայություններ, կամ անցնել այնպիսի պրոցեդուրաներ, որոնք այնքան էլ պարտադիր չեն մարդու օրգանիզմի նորմալ կենսագործունեության

¹ Global medical tourism market: Opportunities and forecasts, 2018-2025, <https://www.alliedmarketresearch.com/medical-tourism-market> .

համար:

Բժշկական ծառայություններ մատուցողները բուժական-պրոֆիլակտիկ և ախտորոշում իրականացնող կազմակերպություններ են (հիվանդանոցներ, կլինիկաներ, բժշկական կենտրոններ), ինչպես նաև անհատ բժիշկները: Նրանք տարբեր միջնորդների (բրոքերների, գործակալների) և պրոֆեսիոնալ խորհրդատուների հետ փոխազդեցության մեջ են գտնվում և այս օղակների միջև: Ընդ որում, եթե ուսումնասիրենք ըստ ծագման երկրի զբոսաշրջիկների հիմնական խմբերը, 2015թ. ցուցանիշները հաշվի առնելով, ապա կունենանք հետևյալ պատկերը և 2025թ. համար մոտավոր հետևյալ կանխատեսումները. (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Զբոսաշրջիկների հիմնական խմբերն ըստ ծագման երկրի¹

№	Երկիրը	2015թ. (մլրդ ԱՄՆ դոլար)	2025թ. (մլրդ ԱՄՆ դոլար)	Աճ %
1.	Չինաստան	137.0	255.4	86
2.	ԱՄՆ	101.0	134.1	33
3.	Գերմանիա	74.4	97.6	31
4.	Մեծ Բրիտանիա	61.3	96.9	58
5.	ՌԴ	22.6	49.1	118
6.	Հոնգ-Կոնգ	26.7	47.4	48
7.	Սինգապուր	22.5	44.9	99
8.	Ֆրանսիա	37.4	47.9	17
9.	Բրազիլիա	18.3	37.8	106
10.	Հվ. Կորեա	21.1	34.3	63

Չինաստանն այստեղ էլ հայտնվել է առաջատարի դիրքում և կանխատեսումները վկայում են, որ առաջիկայում հենց այս պետությունն է բժշկական զբոսաշրջության ամենամեծ պահանջարկը դրսևորող:

Նկատենք, որ բժշկական զբոսաշրջության զարգացման հիմքում ընկած գործոնները ժամանակի ընթացքում ևս փոխվում են և եթե 2013թ. բժշկական ծառայությունների թանկ լինելը հիմնական պատճառ էր մոտ 80% զբոսաշրջիկների համար, ապա արդեն 2015թ. այդ ցուցանիշը կազմում էր 61%: Ընդ որում, դա այն դեպքում, երբ 2015թ. բժշկական ծառայությունների ծախսերի խնայողության հիմքում 8600 ԱՄՆ դոլարի ցուցանիշը 4900 ԱՄՆ դոլարի հասցնելն է² (այսինքն

¹ Visa: Mapping the Future of Global Travel and Tourism (2016).

² Ըստ www.medicaltourismassociation.com կայքի տվյալների:

զբոսաշրջիկը միջին 8600 ԱՄՆ դոլարի փոխարեն ծախսել է միջինում 4900 ԱՄՆ դոլար):

2013թ. համար ցուցանիշը հայտնի չէ, սակայն 2015թ. բժշկական զբոսաշրջիկներն առավել կարևորություն են տվել ծառայության որակին (մոտ 21%): Բժշկական զբոսաշրջիկը 2013թ. տվյալներով միջինում ծախսում էր 7500-15800 ԱՄՆ դոլար, իսկ 2015թ. տվյալներով այդ ցուցանիշը կազմել է 3600-7600 ԱՄՆ դոլար ու սա այն պարագայում, երբ ավիափոխադրման ծախսը չի գերազանցում 1000 ԱՄՆ դոլարը և դրանում ներառված չեն բժշկական ապահովագրության ծախսերը:

Բժշկական զբոսաշրջիկներ ներգրավող հիմնական պետությունների հնգյակը 2000-ական թթ. սկզբներից գլխավորում է Կանադան: Հնգյակում միշտ տեղ ունեն նաև Մեծ Բրիտանիան և Իսրայելը: Սակայն եթե 2015թ. բժշկական զբոսաշրջության համաթվի ցուցանիշով հնգյակում էին Կանադան (76.87), Մեծ Բրիտանիան (76.85), Իսրայելը (74.17), Մինգապուրն (73.96) ու Կոստա-Ռիկան (72.78), ապա արդեն 2016թ. Կանադան, Մեծ Բրիտանիան, Իսրայելը, Մինգապուրն ու Հնդկաստանը՝ համապատասխանաբար 76.62, 74.87, 73.91, 73.56 և 72.10 ցուցանիշներով: Ընդ որում Հնգյակի նոր անդամը՝ Հնդկաստանը, առաջին տեղում է բժշկական զբոսաշրջության համաթվով, իսկ երրորդ տեղում սպասարկման որակով ու շարունակում է բարելավել ցուցանիշները¹:

Հայաստանում բժշկական զբոսաշրջության զարգացման բավականին լավ հիմքեր են ստեղծվել և վերջին տասնամյակում նույնիսկ բավականին լավ շարժ է գրանցվում, ինչի մասին փաստում են ոլորտի զարգացման վերաբերյալ տասնյակ հետազոտությունները, որտեղ նախ նշվում է, զբոսաշրջության՝ որպես ՀՀ տնտեսության զարգացման կարևոր ուղղության մասին, ապա տարբեր գնահատականներ կան ենթակառուցվածքների զարգացման վերաբերյալ:

Բժշկական զբոսաշրջության վերաբերյալ հետազոտություններն այդքան էլ շատ չեն առայժմ, սակայն եթե փորձենք հասկանալ, թե ինչ հիմքերի վրա այս ուղղության զարգացումը, պետք է նախ, փաստենք, առողջարանային բնույթի բավականին հարուստ միջավայրի առկայության մասին և, որ բժշկական մասնագիտությամբ կրթություն ստացողների թիվը բավականին բարձր ցուցանիշներ ունի:

¹ Ըստ www.medicaltourismassociation.com կայքի տվյալների:

Աղյուսակ 3

Եվրոպական տարածաշրջանի առանձին երկրներում 100 000 բնակչի հաշվով բուժական անձնակազմի քանակական ցուցանիշներ¹


№	Երկիրը	Ընդամենը բուժական հաստատություններում աշխատողներ	բժիշկներ		բուժանձնակազմ	
			թիվ	%	թիվ	%
1	Մոնակո	2276	662	29.1	1614	70.9
2	Շվեյցարիա	2012	381	18.9	1631	81.1
3	Լյուքսեմբուրգ	1979	277	14.0	1702	86.0
4	Դանիա	1921	348	18.1	1573	81.9
5	Նորվեգիա	1857	407	21.9	1450	78.1
6	Գերմանիա	1524	373	24.5	1151	75.5
7	Ֆրանսիա	1245	315	25.3	930	74.7
8	Իսրայել	808	303	37.5	505	62.5
9	Թուրքիա	395	167	42.3	228	57.7
10	Բելառուս	1441	379	26.3	1062	73.7
11	Ուզբեկստան	1308	251	19.2	1057	80.8
12	ՌԴ	1237	431	34.8	806	65.2
13	Ղազախստան	1092	381	34.9	711	65.1
14	Ադրբեջան	972	338	34.8	634	65.2
15	Ուկրաինա	985	349	35.4	636	64.6
16	Մոլդովա	930	283	30.4	647	69.6
17	Վրաստան	817	410	50.2	407	49.8
18	Ղրղզստան	781	238	30.5	543	69.5
19	Հայաստան	744	278	37.4	466	62.6
20	Թուրքմենիա	690	232	33.6	458	66.4
21	Տաջիկստան	637	190	29.8	447	70.2

Համեմատությունը կատարվել է Եվրոպական տարածաշրջանի կտրվածքով՝ հաշվի առնելով, որ տարածաշրջանային կողմնորոշում ունեցող զբոսաշրջիկի համար ընտրության հիմքում ընկած գործոնները համեմատաբար մոտ են և գլոբալ մրցակցության մեջ Հայաստանը առանձնապես բարձր դիրքեր չի գրավում: Այս իմաստով նախ, կարևորել ենք բուժական անձնակազմի թվաքանակի ցուցանիշը և համեմատության աղյուսակում ներառել ենք Եվրոպական երկրներից ամենաբարձր ցուցանիշներն ունեցողներին, ԱՊՀ

¹ Richardson E. Armenia:Health system review.Health Systems in Transition, 2013,15(4), pp.1– 99.

տարածաշրջանի երկրները և այն երկրները, որտեղ ամենահաճախն են այցելում Հայաստանից:

Ակնհայտ է, որ Հայաստանը, մեղմ ասած, լավագույն ցուցանիշներ ունեցողներից չէ: Ընդ որում, եթե փորձենք առավել դետալացված դիտարկել այս ցուցանիշը Հայաստանի համար, ապա պատկերը հետևյալն է (գծապատկեր 3).



Գծապատկեր 3

10000 բնակչի հաշվով բժիշկների, բուժ անձնակազմի և հիվանդանոցային մահճակալների թվի դինամիկան 2013-2017թթ.

Սակայն այստեղ պետք է հաշվի առնենք, որ, ինչպես վկայում են բժշկական զբոսաշրջության զարգացման համաշխարհային միտումները, առավել մեծ պահանջարկ ունեն կոսմետիկ-պլաստիկ և ատամնաբուժական ծառայությունները, որտեղ Հայաստանը տարբեր գնահատումներով նույնիսկ առաջատար դիրքերում կարող է հայտնվել և այստեղ ոչ երկրորդային դերակատարում ունեն ատամնաբուժական ծառայությունների բարձր որակն ու ցածր գները:

Այս մասին են վկայում մեր կողմից 2016-2018թթ. ամառային ամիսներին Երևանի մի քանի առաջատար ատամնաբուժական կլինիկաներում աշխատողների և այցելուների շրջանակներում կատարված դիտարկումներն ու հարցումները, համաձայն որի հունիս-օգոստոս ամիսներին այցելուների մոտ 40%-ը ոչ հայաստանաբնակներ են (հիմնականում ՌԴ-ում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և հայկական սփյուռք ունեցող մի քանի այլ երկրներում ապրող հայեր), ովքեր նշում են, որ իրենց Հայաստան այցելության կարևոր նպատակներից մեկը ի թիվս հարազատներին տեսակցելն ու հայկական միջավայրի հետ շփվելը, հենց ատամնաբուժական ծառայություններից օգտվելն է:

Նկատենք, որ 2013-2017թթ. ընթացքում բերանի խոռոչի բուժում ընդունած բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվի

նկատմամբ չնայած անկում է գրանցել, սակայն ինքնուրույն գործող կլինիկաների թիվը գրեթե չի փոխվել, իսկ ստոմատոլոգիական բաժանմունք ունեցող հիմնարկների թիվը բավականին շատացել է: Իսկ ատամնաբուժական ծառայությունների բարձր եկամտաբերության մասին խոսելն ավելորդ է նույնիսկ:

2017թ. ատամնաբուժական ծառայություններից օգտված բնակչության մասնաբաժինը, կարծում ենք, նշանակալի նվազել է՝ պայմանավորված այս ծառայությունների հարկման դաշտի փոփոխությամբ և ցուցանիշի անկումն առավել պայմանավորված է չգրանցված հաճախորդներով, քան ծառայությունների ցածր եկամտաբերությամբ կամ պահանջարկով: Այլապես բուժական այնպիսի հաստատություններ, որոնք մասնագիտացած են, օրինակ ակնաբուժական կամ ծննդօգնության ծառայությունների գծով, չէին բացի ատամնաբուժական բաժանմունքներ:

Աղյուսակ 4

Ատամնաբուժական ծառայությունների և դրանք մատուցող կազմակերպությունների դինամիկան 2013-2017թթ.¹

	2013	2014	2015	2016	2017
Ինքնուրույն գործող ստոմատոլոգիական կլինիկաների քանակը	56	55	54	52	52
Ստոմատոլոգիական բաժանմունքներ ունեցող հիմնարկների քանակը	130	130	125	137	172
Բերանի խոռոչի բուժում ընդունած անձանց տեսակարար կշիռ բնակչության ընդհանուր թվի նկատմամբ, %	4.4	4.6	4.4	4.3	2.1

Հայաստանում զբոսաշրջության զարգացման համար ընդհանրապես, և մասնավորապես բժշկական զբոսաշրջության զարգացման համար առավել մեծ խոչնդոտ են հանդիսանում զբոսաշրջային ենթակառուցվածքների բացակայությունը, դրանց ցածր որակը կամ բարձր գինը:

Այս տեսանկյունից, նկատենք, որ հյուրանոցային ցանցը զարգացած է հիմնականում Երևանում, Ծաղկաձորում, Ջերմուկում, իսկ առանձին քաղաքներում նույնիսկ ընդհանրապես բացակայում են հյուրանոցները: Վերջիններիս գնային քաղաքականության մասին խոսելիս, պետք է նշել, որ հարևան Վրաստանի հետ համեմատելիս երբեմն նույնիսկ անգամներով տարբերություններ են առաջանում միայն կացության և սննդի ծախսերը:

¹ ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք, 2018, էջ 175:

Տրանսպորտային հաղորդակցությունը ևս լավ վիճակում չէ՝ տեղափոխությունը բացառապես ավտոմոբիլային տրանսպորտի միջոցով է ու ոչ միշտ կանոնավոր: Սա այն դեպքում, երբ Հայաստանի տեսարժան վայրերն առավելապես մարզային բաշխվածություն ունեն և երբեմն միմյանց շատ մոտիկ գտնվող երկու զբոսաշրջային վայրեր այցելելու համար հարկ է լինում վերադառնալ Երևան ու հաջորդ օրը կրկին նույն ճանապարհն անցնելով այցելել:

Հենց այս խնդիրներն են, որ տարածաշրջանում բավականին լավ պայմաններ ունեցող բժիշկների ու առողջարանների պակաս չունեցող Հայաստանում առայժմ ոչ ամբողջ ուժով է զարգանում բժշկական զբոսաշրջությունը:

Հենց այս խնդիրները հաշվի առնելով է, որ հնարավոր է տարածաշրջանում և ամբողջ աշխարհում խնդիրներով հագեցած Իրանից բավականին մեծ թվով ու արդյունավետ զբոսաշրջիկներ ներգրավել: Այս խնդիրներն են, որոնց հաշվի առնելու դեպքում հնարավոր է Եվրասիական տնտեսական միության սահմաններում էական մրցակցային առավելություններ ստեղծել Հայաստանի զբոսաշրջության զարգացման համար և այս խնդիրներն են, որ իրականում ազդում են ՀՀ տնտեսական զարգացման դանդաղ ընթացքի վրա:

**ԲԺՇԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Կարապետ Հովհաննեսի Առաքելյան

ՀՊՏՀ Մարքեթինգի ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության
թեկնածու

Էլեն Վահանի Խեկոյան

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրանտ

Համառոտագիր

Հայաստանի տնտեսական զարգացման և հիմնական մրցակցային առավելությունների մասին խոսելիս գրեթե բոլոր հետազոտություններում հանդիպում ենք այն մտքին, որ զբոսաշրջությունը այդ զարգացման կարևորագույն ուղղություններից մեկն է: Այս զարգացման մեջ կարևոր ուղղություններից մեկը բժշկական զբոսաշրջությունն է:

Ներկայացված հոդվածում վերլուծվել է բժշկական զբոսաշրջության զարգացման հիմքերն ու ընդհանուր միտումները աշխարհում, հիմնական ձգող ու պահանջարկի կենտրոնները: Ատամնաբուժական ծառայությունների

օրինակով ցույց է տրվել Հայաստանում դրա զարգացման հնարավորություններն ու ներուժը:

Հիմնարաներ. բժշկական զբոսաշրջություն, հիվանդություն, զբոսաշրջային կենտրոն, ատամնաբուժական ծառայություն, զբոսաշրջային ենթակառուցվածք:

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ МЕДИЦИНСКОГО ТУРИЗМА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Карапет Оганесович Аракелян

Ассистент кафедры маркетинга АГЭУ, кандидат экономических наук

Элен Вагановна Хекоян

Магистрант факультета Экономики и управления ЕГУ

Аннотация

При обсуждении проблем экономического развития или конкурентных преимуществ Армении, почти во всех исследованиях встречается точка зрения, согласно которому туризм - один из основных направлений развития. В этом развитии важное значение имеет медицинский туризм.

В данной статье обсуждены основные тенденции глобального развития медицинского туризма, представлены основные центры тяжести и спроса. На примере стоматологических услуг показан потенциал развития медицинского туризма в Армении.

Ключевые слова: медицинский туризм, болезни, туристический центр, стоматологические услуги, туристическая инфраструктура.

THE PROBLEMS OF MEDICAL TOURISM DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

Karapet Hovhanes Arakelyan

ASUE marketing department assistant, PhD in Economics

Elen Vahan Khekoyan

Undergraduate of YSU Faculty of Economics and Management

Abstract

At discussion of problems of economic development or competitive advantages of Armenia, almost in all researches the point of view according to which tourism - one of the main directions of development meets. In this development medical tourism is important.

In this article top trends of global development of medical tourism are discussed, the main centers of gravity and demand are presented. On the example of dental services the potential of development of medical tourism in Armenia is shown.

Keywords: medical tourism, diseases, tourist center, dental services, tourist infrastructure.